ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

20 մայիսի երեքշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

65
(3096)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## Ո՞ՒՐ ԿՈՐԱՎ «ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔՆՆԻՉ» ՆԱԶԱՐՅԱՆԸ

ՀՀ քննչական համակարգում, կարծես, միշտ ինչ-որ բան թաքուն է լինում. այս անգամ՝ Հրաչ Նազարյանի «անհետացումը» պետական համակարգից, ինչը որքան հանկարծակի էր, նույնքան էլ խորհրդավոր: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության երրորդ վարչության ավագ քննիչ Հրաչ Նազարյանը անակնկալ կերպով ազատվել է աշխատանքից: Ըստ հասանելի տվյալների՝ 32-ամյա Նազարյանը զբաղվել է մի շարք ուշագրավ գործերով, եւ երբ Քննչական ծառայության ղեկավար Արգիշտի Քյարամյանը ՍՄՍ-ով հեռացավ պաշտոնից, եւ նշանակվեց Արթուր Պողոսյանը, այս քննիչը, ըստ տարբեր չճշտված տեղեկությունների, ոչ արդյունավետ աշխատանքի համար հեռացվեց աշխատանքից: Քննչական կոմիտեի խոսնակը՝ որից ակնկալվում էր գոնե տեխնիկական պարզաբանում, անհասանելի է: Ու քանի դեռ պաշտոնական տեղեկություն չկա, հանրությունն ու մամուլը մնում են ենթադրությունների դաշտում:

Եվ այսպես, «Ժողովուրդ» օրաթերթը բացահայտեց, որ աշխատանքի արդյունավետությունը նկատելի է երիտասարդ քննիչ Նազարյանի հայտարարագրում. երկու բնակարան, շքեղ մեքենա՝ 2021 թ. Արտադրության Range Rover, որը, ըստ բաց աղբյուրների, արժե 75 հազարից մինչեւ 100 հազար ԱՄՆ դոլար: Քննիչը կարողացել է գնել 2019 թ. արտադրության «Տեսլա» եւ նույն՝ 2023 թ.-ին, 8 մլն դրամով գնված մեքենան 22 մլն դրամով վաճառել է: Սակայն այդքան էժան «Տեսլա» ավտոշուկայի կայքերում չգտնվեց:

Տեղեկացնենք, որ քննիչ Նազարյանի հայրը ՀՀ ՊԵԿ երկարամյա աշխատակից է եղել. Արտաշես Նազարյանը զբաղեցրել է մոլիբդենով հարուստ Սյունիքի մարզի օպերատիվ ծառայության պետի պաշտոնը, ով ջերմ հարաբերությունները պահպանել է նաեւ ԶՊՄԿ-ի հետ:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ «Հանրապետություն» կուսակցության ընտրացուցակներում պարբերաբար ներկայացված նախկին դատախազի տեղակալ Բորիս Նազարյանն էլ «թանկարժեք քննիչի» հորեղբայրն է: Եվ կան լուրեր, որ Նազարյանը փորձում է իր զարմիկին տեղավորել դատախազության համակարգում:

Իհարկե, փորձեցինք նաեւ Նազարյաններին գտնել՝ մեկնաբանություններ ստանալու համար, բայց ապարդյուն:

Երբ պետական գումարներն ու հանրային վստահությունը խաչվում են կասկածելի կապերի ու պասիվ իրավապահների միջանկյալում, հասարակությունը մնում է առանց պատասխանների: 2024 թվականի գարնանը Հայաստանի Ազգային ժողովի ամբիոնից պատգամավոր Թագուհի Թովմասյանը բարձրաձայնեց մի լրջագույն հարց՝ հնարավոր չարաշահումների մասին Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայում (ՀՖՖ): Ըստ նրա՝ ֆեդերացիայի ներսում առկա են ֆինանսական մութ գործարքներ, շահերի բախում եւ թափանցիկության ակնհայտ պակաս: ՀՀ գլխավոր դատախազությունը չի արձագանքել «Ժողովուրդ» օրաթերթի՝ այս մասին ուղղված հարցմանը: Լռություն մի դեպքում՝ երբ հնչում են միլիոնավոր դրամների վերաբերյալ լուրջ կասկածներ, եւ երբ պետության իրավական մեքենան պարտավոր է գործել՝ անկախ անձանց քաղաքական կամ անձնական կապերից: Ինչի՞ մասին էր խոսքը. 2021 թվականին ՀՖՖ-ն իրականացրել է Աբովյանի մարզադաշտի վերանորոգում ՈՒԵՖԱ-ի ֆինանսավորմամբ: Ծրագրի արժեքը՝ 783 միլիոն դրամ (շուրջ 1.5 միլիոն դոլար), որի մասին ծավալուն հրապարակում է եղել «Հետք»-ում: Սակայն պարզվել է, որ մրցույթը շահած «Արտշին պլյուս» ՍՊԸ-ն կապ ունի պետական պաշտոնյաների հետ. այն հիմնադրել է Արտակ Ալեքսանյանը՝ նախկինում նման ծավալի շինարարության փորձ չունեցող շինարար, որի ընկերությունն ունեցել է ընդամենը 4 աշխատակից: Ըստ բաց աղբյուրների՝ Ալեքսանյան եղբայրները ընկերներ են Անտառային կոմիտեի նախագահ Վլադիմիր Կիրակոսյանի հետ, որն իր հերթին մտերիմ է շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանի հետ: Վերջինս՝ որպես ՀՖՖ նախագահի խորհրդական, պատասխանատու է Կառավարության եւ ֆեդերացիայի միջեւ կապերի համար:

***Մանրամասները՝ ArmLur.am կայքում:***

«Ժողովուրդ» օրաթերթը մայիսի 15-ին հրապարակել էր, որ Նոր Նորքի թաղապետ Տիգրան Տեր-Մարգարյանը հեռանալու է պաշտոնից: Երեկ պաշտոնապես հայտնի դարձավ այդ մասին: Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը, ըստ մեր վստահելի աղբյուրների, վերջին օրերին «բանակցային գործընթաց» է սկսել Նոր Նորքի վարչական շրջանի ղեկավար Տիգրան Տեր-Մարգարյանի հեռացման վերաբերյալ: Պատճառը հանրային եւ քաղաքական բուռն վրդովմունք առաջացրած միջադեպն էր, երբ Տեր-Մարգարյանը եւ Նոր Նորքի մի խումբ աշխատակիցներ բռնության էին դիմել ակտիվիստ Արթուր Չախոյանի նկատմամբ՝ ուղիղ եթերում հարձակվելով նրա վրա, բառի բուն իմաստով՝ բռունցքներով լուծելով իրենց «վարչական խնդիրները»: Դեպքից հետո վարչական վարույթներ հարուցվեցին ինչպես Արթուր Չախոյանի, այնպես էլ Տիգրան Տեր-Մարգարյանի նկատմամբ, սակայն վերջինս շարունակում էր պաշտոնավարել՝ փորձելով իր դիրքը պահել նաեւ քաղաքական հարթակում: Նիկոլ Փաշինյանի քաղաքական թիմակիցները, ներառյալ՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության առաջնորդը, թերեւս հասկացել են, որ իրենց խորապես խոցելի են դարձնում նման դեպքերը, անպատժելիությունը: Այս ֆոնին Տիգրան Ավինյանը կարողացել է կազմակերպել Տեր-Մարգարյանի հեռանալը:

Շուրջ 3 տարի կալանքի տակ գտնվող ՊԲ նախկին հրամանատարին ԱԱԾ մեկուսարանից տեղափոխել են Վարդաշենի մեկուսարան: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այս պահին դռնփակ նիստով շարունակվում է վկաների հարցաքննությունը: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ 3 տարվա դատաքննության ընթացքում 20 վկա է հարցաքննվել: Հակակոռուպցիոն կոմիտեն նախապես հաստատած վկաներից միայն չի հարցաքննի Արայիկ Հարությունյանին, քանի որ նա հակառակորդի կողմից գերեվարված է, Բաքվի բանտում է: Նշենք, որ Գլխավոր դատախազությունը պաշտոնապես հայտնել էր, որ Արցախի պատշգպանության բանակի նախկին հրամանատար, գեներալ-լեյտենանտ Միքայել Արզումանյանի վերաբերյալ քրեական գործն ուղարկել է դատարան: Հիշեցնենք՝ օգոստոսի 30-ին Միքայել Արզումանյանը ձերբակալվել էր Շուշի քաղաքի եւ հարակից շրջանների պաշտպանության կազմակերպման ընթացքում պաշտոնեական անփութություն կատարելու մեղադրանքով: Ըստ ՔԿ-ի՝ գեներալ-լեյտենանտը 2020 թվականի հոկտեմբերի 30-ից մինչեւ նոյեմբերի 9-ը Շուշիի եւ հարակից շրջանների պաշտպանության կազմակերպման ընթացքում անփույթ վերաբերմունք է դրսեւորել իր ծառայողական պարտականությունների նկատմամբ՝ չկատարելով եւ ոչ պատշաճ կատարելով դրանք, ինչը անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ:

ՀԵՏԵՎԵԼՈՎ ԻՄՊԻՉՄԵՆՏԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ

# «ԲՈԼՈՐԸ ՃԱՆԱՉՈՒՄ ԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆԻՆ», ԱՂԱԶԱՐՅԱՆ

**Պատգամավորներ Հովիկ Աղազարյանի ու Հակոբ Ասլանյանի նախաձեռնությամբ ԱԺ-ում ՀՀ վարչապետին անվստահություն հայտնելու ԱԺ որոշման նախագիծ է ներկայացվել, ըստ որի՝ Էդմոն Մարուքյանն առաջադրվում է որպես վարչապետի թեկնածու:**

ArmLur.am-ը այս թեմայի վերաբերյալ զրուցել է ՀՀ ԱԺ պատգամավոր Հովիկ Աղազարյանի հետ:

**-Պարոն Աղազարյան, խոսենք վերջին իրադարձություններից: Հայտնի դարձավ, որ Դուք եւ Հակոբ Ասլանյանը նիստ եք գումարել կուսակցության վարչությունում եւ որոշում եք կայացրել իմպիչմենտի գործընթաց սկսել խորհրդարանում: Վարչապետի Ձեր թեկնածուն «Լուսավոր Հայաստան» կուսակցության նախագահ Էդմոն Մարուքյանն է: Ըստ Ձեզ՝ նա այն անձնավորությո՞ւնն է, որը կկարողանա փոխարինել Նիկոլ Փաշինյանին: Որտեղի՞ց սկսվեց այս պատմությունը: Ինչպե՞ս որոշեցիք, որ պետք է Էդմոն Մարուքյանը լինի ձեր թեկնածուն:**

-Շուրջ երկու տարի է արդեն, որ ես ու պարոն Ասլանյանը մեր նախկին խմբակցության վերաբերյալ դիրքորոշումներ, անհանգստություններ ունեինք, եւ դրանք աստիճանաբար խորացան ու բերեցին այն վիճակին, որտեղ հայտնվեցինք: Հիմա հարց կառաջանա՝ եթե խմբակցությունից դուրս եկաք եւ ունեիք անհանգստություններ, ինչո՞ւ չառաջարկեցիք իմպիչմենտի գործընթաց: Պատասխանեմ. իմ ու պարոն Ասլանյանի հնարավորությունները շատ համեստ են: Բայց երբ Նարեկ Մալյանն ու Էդգար Ղազարյանն այդ առաջարկությամբ հանդես եկան, մենք նորից որեւէ նախաձեռնությամբ հանդես չեկանք: Այն բանից հետո, երբ «Հայաստան» դաշինքը հայտարարեց, որ ինքը թեկնածու չունի եւ պատրաստ է միանալ ցանկացած թեկնածուի, «Պատիվ ունեմ»-ը նույնպես նմանատիպ հայտարարությամբ հանդես եկավ, արդեն մեր կարծիքը քաղաքական դաշտում դարձավ իրական, ու մենք հանդես եկանք այդ նախաձեռնությամբ: Թեկնածուների հետ շփվեցինք, որոնք 7-ն են: Մենք միաձայն որոշեցինք, որ կընտրենք Էդմոն Մարուքյանին. բոլորը լավ ճանաչում են Մարուքյանին եւ ներկայացնելու կարիք չկա:

**-Պարոն Աղազարյան, համացանցում արդեն քանի օր է քննարկում է, որ Էդմոն Մարուքյանը «Նիկոլ Փաշինյանի մարդն» է, որ իրեն ներկայացնելով, նշում եք, թե Դուք ազնիվ գործ եք սկսում, ճիշտ չէ: Մարդիկ չեն ընդունում Էդմոն Մարուքյանին: Չե՞ք ընդունում, որ Ձեր այս գործընթացն արդեն ձախողված է:**

-Էդմոն Մարուքյանը երբեք Նիկոլ Փաշինյանի հետ չի աշխատել: Նա աշխատել է Հայաստանի Հանրապետության վարչապետի հետ. դրանք տարբեր բաներ են, պետք է չէ շփոթել իրար հետ:

**-Ի՞նչ արդյունք ունեք այսօրվա դրությամբ:**

-Արդեն ստորագրեցինք փաստաթղթերն ու գործընթացին մեկնարկ է տրվել: Հիմա արդեն այն պատգամավորները որոնք համարում են, որ մեր մոտեցումն իրենց համար ընդունելի է, թող գան ու ստորագրեն նախաձեռնության տակ: Իսկ այն մտայնությունը, որ Էդմոն Մարուքյանը «Նիկոլ Փաշինյանի մարդն» է, սխալ է:

*Զրուցեց ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ*

ՍԻՐՈՒԾՈՆ «ՋԱՐՄԱՑԵԼ» Է

# 1000 ԽՈՇՈՐ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ

**ArmLur.am-ը ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի կայքից տեղեկացավ, որ երգչուհի Սիրուշոն պետությանը վճարել է 83.1 մլն դրամ հարկ եւ հայտնվել է 1000 խոշոր հարկատուների ցանկի 944-րդ տեղում:**

ՊԵԿ պաշտոնական կայքում հրապարակվել է 2025 թ. հունվար-մարտ ամիսների ընթացքում առաջին 1000 խոշոր հարկ վճարողների կողմից վճարված հարկերի եւ վճարների վերաբերյալ տեղեկատվությունը:

1000 խոշոր հարկ վճարողների կողմից 2025 թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում պետական բյուջե ընդհանուր առմամբ վճարվել է ավելի քան 409 միլիարդ 353 միլիոն դրամ, նախորդ տարվա նույն ցուցանիշը կազմել է 387 միլիարդ 109 միլիոն դրամ, կամ ավելի է հավաքագրվել 22 միլիարդ 244 միլիոն դրամ:

Օրերս երգչուհի Սիրուշոն հայտնեց, որ իրեն պատկանող «Սիրուշո Փրադաքշնը» (Sirusho Production)՝ հայկական երաժշտական եւ մշակութային արտադրական ընկերությունը, եւս մտել է Հայաստանի 1000 խոշոր հարկատուների ցանկում: Սիրուշոն մեկնաբանել է՝ «դե շատ հարկ ենք վճարել»: Նա զարմացած էր, թե ինչպես է այդպես ստացվել:

Ընկերությունը զբաղվում է Սիրուշոյի երաժշտական նախագծերի, տեսահոլովակների եւ համերգների կազմակերպմամբ, ինչպես նաեւ մշակութային արտադրանքների ստեղծմամբ: Սիրուշոն նաեւ հիմնել է Pregomesh անվամբ արծաթե ձեռագործ զարդերի բրենդը, որը ներկայացնում է հայկական մշակույթը ժամանակակից ձեւով:

«Սիրուշո Փրադաքշնը» պետությանը վճարել է շուրջ 83.1 մլն դրամ հարկ: Հարկ է նշել, որ 2025 թվականի առաջին եռամսյակի 1000 խոշոր հարկատուների ցանկի առաջին եռյակում են՝

«Գազպրոմ Արմենիա»-ն, որը վճարել է 19.9 մլրդ դրամ (2024թ. այդ թիվը 18.1 մլրդ էր):

Երկրորդ տեղում «Մոբայլ Սենթր» ընկերությունն է՝ վճարած 16.5 մլրդ դրամով (2024թ.՝ 19.9 մլրդ դրամ):

Երրորդ տեղում «Գրանդ Տոբակո» ընկերությունն է՝ 12 մլրդ դրամ վճարած հարկերով (2024թ. 13.2 մլրդ դրամ):

*ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

## ԼԱՎՐՈՎԸ ԿԱՅՑԵԼԻ ԵՐԵՎԱՆ

Մայիսի 20-21-ը Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը աշխատանքային այցով կայցելի Երեւան: Այս մասին հայտնում են Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարությունից: Նախատեսված են հանդիպումներ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի, վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ նախագահ Վահագն Խաչատուրյանի հետ:

«Արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարները առարկայական մտքեր կփոխանակեն տարածաշրջանային անվտանգության խնդիրների, այդ թվում՝ հայ-ադրբեջանական եւ հայ-թուրքական կարգավորման գործընթացների հեռանկարների շուրջ»,- ասվում է ՌԴ ԱԳՆ տարածած հաղորդագրության մեջ:

Նշվում է, որ Մոսկվայում ակնկալում են, որ այցը կնպաստի Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ քաղաքական եւ միջգերատեսչական երկխոսության ամրապնդմանը, կհանգեցնի փոխըմբռնման աճի եւ կողմերից յուրաքանչյուրի համար հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ փոխընդունելի հանգուցալուծումների գտնմանը:

## ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԸ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԻ ՄԱՍԻՆ

Մինչեւ հերթական ընտրությունները մեկ տարի է մնացել, նաեւ հնարավոր է արտահերթ ընտրություններ լինեն, որի հավանականություն ես տեսնում եմ, եւ պարզ է, որ հիմա քաղաքական մարտերը խորհրդարանում պիտի պիտի սրվեն:

Այս մասին մի քանի լրատվամիջոցի տված հարցազրույցում ասել է Հայաստանի Հանրապետության երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը:

«Իմ գնահատականով գալիք տարին այդպես էլ լինելու է: Հիմա մարդիկ ինչ-որ նարատիվներով իշխանություն են ստացել եւ այսօր արդարացման ոչինչ չունեն: ԱՆԻՖ-ի հիմնադրամով 65 միլիոն ցնդել է, մեղադրյալ չկա: Հիմա կարող է՝ ձեւական բերեն, մի երկու հոգու մեղադրանք առաջադրեն, հետո ասեն՝ դե քանի որ համագործակցել է քննության հետ, գործուն զղջացել է, կարճեն: Այդ տերմինն իրենք են ընդունել, այդպիսի բան չկար: Ինչ ասես՝ դրա տակ կարող ես դնել: Ինչ-որ քավության նոխազ են գտնելու, վրան ինչ-որ մի բան կապեն, մեկին կարող են տանել մի թեթեւ ինչ-որ մի տեղ, իբրեւ պատիժ տան, փողով նստելու ինստիտուտ էլ է շուտով մեզ մոտ առաջանալու:

Հիմա սուր է լինելու այդ պայքարը: Մարդիկ գիտեն՝ ինչ են իրենք արել եւ այդ գիտակցությունը ուղղակի բերում է այս նյարդային դրսեւորումներին: Այդ աստիճանի ապուշ չեն, գիտեն՝ ինչ են արել, եւ պատասխան տալու ժամանակը գալիս է», - ասել է նա:

## ՓՈՔՐԻԿԻՆ ԴԵՌ ՉԵՆ ԳՏԵԼ



15-րդ օրն է, ինչ մայիսի 4-ից կորած 2-ամյա Տիգրանին դեռ չի հաջողվել գտնել:

ArmLur.am-ին ՀՀ Ներքին գործերի նախարարության լրատվականից փոխանցեցին, որ այսօր վաղ առավոտից կրկին ինտենսիվ վերսկսվել են որոնողափրկարարական աշխատանքները: Աշխատանքներում ներգրավված են ոստիկաններ եւ փրկարարներ: Որոնողափրկարարական աշխատանքները իրականացվում են Մարմարիկ գետի ողջ երկայնքով, նաեւ Աղբյուրակի ջրամբարում՝ օգտագործելով հատուկ տեխնիկա, դրոններ, ջրամբարի հատակը նկարահանող եւ ուսումնասիրող սարքեր: Աշխատանքներում ներգրավված են ջրասուզակներ: Հիշեցնենք, որ մայիսի 4-ին ՆԳՆ փրկարար ծառայություն ահազանգ էր ստացվել որ 2 տարեկան տղա երեխան Մարմարիկ գետի ափին կորել է, եւ ծնողներն ունեն կասկածներ, որ հնարավոր է՝ երեխան անզգուշաբար գետն ընկած լինի:

## ԱՆԿԱԽ ԱՄՆ-Ի ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Իրանը կհարստացնի ուրանը անկախ նրանից՝ Միացյալ Նահանգների հետ համաձայնություն ձեռք կբերվի՞, թե՞ ոչ, կիրակի հայտարարել է Իրանի արտգործնախարար Աբբաս Արաղչին: «ԱՄՆ-ն հետաքրքրված է երաշխիքներով, որ Իրանը միջուկային զենք չի ստանա: Նման համաձայնությունը հասանելի է, եւ մենք պատրաստ ենք լուրջ երկխոսության՝ հասնելու այնպիսի լուծման, որն ընդմիշտ կապահովի այդ արդյունքը: Սակայն ուրանի հարստացումը Իրանում կշարունակվի՝ անկախ նրանից, համաձայնագիր կկնքվի, թե ոչ»,- գրել է Արաղչին «Իքս» սոցիալական ցանցում:

Նրա խոսքերը հաջորդել են ավելի վաղ ԱՄՆ նախագահի հատուկ դեսպանորդ Սթիվ Ուիթքոֆի հայտարարությանը, ըստ որի՝ Վաշինգտոնը «թույլ չի տա Իրանին ուրանի հարստացման նույնիսկ 1%-ի հզորություն»:

Մայիսի 11-ին Օմանում տեղի ունեցավ ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ անուղղակի բանակցությունների չորրորդ փուլը: Իրանի եւ ԱՄՆ-ի պատվիրակությունները գլխավորում էին արտգործնախարար Արաղչին եւ ԱՄՆ նախագահի հատուկ դեսպանորդ Ուիթքոֆը: Իրանի դիվանագիտական առաքելության ղեկավարը հայտարարել է մի շարք զիջումների գնալու պատրաստակամության մասին, եւ որ կողմերը համաձայնել են շարունակել բանակցությունները:

ԲԱՆՏԱՊԵՏԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ

# ԻՆՉ ՈՒՆԵՑՎԱԾՔ ՈՒՆԻ ԾՈՎԻՆԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԸ

**Անկախ Հայաստանի պատմության մեջ առաջին կին բանտապետը՝ Քրեակատարողական ծառայության պետ Ծովինար Թադեւոսյանը, ներկայացրել է պաշտոնը ստանձնելու հայտարարագիր, որը ներկայացնում ենք ձեզ:**

Այսպիսով՝ ArmLur.am-ը ներկայացնում է Քրեակատարողական ծառայության պետ Ծովինար Թադեւոսյանի հայտարարագրի վերլուծությունը:

Քրեակատարողական ծառայության պետ Ծովինար Թադեւոսյանի պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների եւ շահերի հայտարարագրի համաձայն՝ նրա հետ բնակվում է 4 անձ, որից մեկը՝ Թադեւոս Թադեւոսյանը, որպես պաշտոն նշել է ինքնազբաղված (Կոշիկի եւ կաշվե գալանտերեայի եւ համանման այլ արտադրատեսակների արտադրություն), 2-ը անչափահաս են, 1-ը նշված չէ:

Թադեւոսյանը 2022 թվականին Երեւանում ձեռք է բերել բաժնային սեփականության իրավունքով բնակարան:

Բանտապետի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 1.65 եվրո, 386 հազար 486 ՀՀ դրամ, 24 հազար 253 ՀՀ դրամ:

Պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ առկա կանխիկ դրամը կազմել է 50 հազար ՀՀ դրամ:

Նշված գնումներից զատ՝ Թադեւոսյանը հայտարարագրում չի նշել հաշվետու ժամանակաշրջանի եկամուտները, քանի որ պաշտոնը ստանձնել է հունվարի 8-ին:

Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ կազմել է 18 մլն 335 հազար դրամ, որը 9 վարկերի գումար է, որից 5 մլն 71 հազար դրամը բնակարանի հիփոթեքի մայր գումարի մնացորդն է:

Հիշեցնենք՝ Նիկոլ Փաշինյանը ֆեյսբուքյան տեսանյութով հայտնել էր, որ Ծովինար Թադեւոսյանին կնշանակի ԱՆ Քրեակատարողական ծառայության պետ:

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ Ծովինար Թադեւոսյանը մինչ այս պաշտոնը զբաղեցնելը եղել է Քրեակատարողական ծառայության Սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքների բաժնի պետ:

Համաձայն մամուլում շրջանառվող լուրերի՝ Ծովինար Թադեւոսյանը Սրբուհի Գալյանի մոտ ընկերուհին է, ինչպես նաեւ նախարարի աչքն ու ականջը համակարգում:

*ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ

Կիպրոսի Հանրապետության Ներկայացուցիչների պալատի նախագահ Անիտա Դիմիտրիուն անընդունելի է համարում 2025 թվականին ադրբեջանական կողմի դրսեւորումները, հայ գերիների շինծու դատավարությունը:

Անիտա Դիմիտրիուն նման դիրքորոշում հայտնեց Հայաստանի ԱԺ նախագահի հետ համատեղ ասուլիսում՝ անդրադառնալով Ադրբեջանում ապօրինաբար պահվող հայ գերիների ու Բաքվում ընթացող շինծու դատավարության վերաբերյալ հարցին:

Նա ընդգծեց, որ այդ չափազանց զգայուն հարցի վերաբերյալ Կիպրոս դիրքորոշումը նույնն է, ինչ Հայաստանինը:

«Այսինքն՝ մենք չենք կարող համաձայնել այն ամենին, ինչ հակադրվում է միջազգային իրավունքին, մարդու իրավունքներին: Եվ դա մեր սկզբունքային դիրքորոշումն է յուրաքանչյուր հարցի վերաբերյալ», - ասել է նա:

## ԱԶԱՏՎԵԼ Է ԱՇԽԱՏԱՆՔԻՑ

Մխչյանի միջնակարգ դպրոցի տնօրենը ուրբաթ օրը դիմում է գրել եւ ազատվել աշխատանքից: Այս մասին հայտնել են Արարատի մարզպետարանից:

Հիշեցնենք՝ Մխչյանի բնակիչները պատմել են, որ Արարատի մարզի Մխչյան գյուղի Քրիստափոր Ալավերդյանի անվան դպրոցի բարձր դասարանների մի քանի տղաներ դպրոցի զուգարանում կապկպել են 4-րդ դասարանի երկու աշակերտի եւ ստիպողաբար թմրանյութ տվել: Դրանից հետո երեխաների մոտ կախվածություն է ի հայտ եկել, նրանք սկսել են տնից գումար գողանալ՝ կրկին նույն աշակերտներից թմրանյութ գնելու նպատակով:

Տեղի ունեցած դեպքով նախաձեռնվել է քրեական վարույթ Քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 5-րդ, 8-րդ կետերով (շորթումը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ, անչափահասի նկատմամբ), 4 անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում:

## ԿՏԵՂԱԴՐՎԻ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՐՁԱՆԸ

Մեծանուն արվեստագետ, շանսոնիե, Հայաստանի ազգային հերոս Շառլ Ազնավուրի արձանի պատրաստման եւ տեղադրման գործընթացը շարունակվում է, եւ հուլիսի 8-12-ն ընկած ժամանակահատվածում տեղի կունենա արձանի բացման հանդիսավոր արարողությունը: Այս մասին ArmLur.am-ին տեղեկացնում են Երեւանի քաղաքապետարանից:

## ԲԱԽՈՒՄՆԵՐ՝ ՔՐԴԵՐԻ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ՋՈՒ ՄԻՋԵՎ

«Սիրիական դեմոկրատական ուժերի» (ՍԴՈՒ) քրդական ջոկատները լույս երկուշաբթի գիշերը Հալեպի նահանգում՝ Թիշրին ամբարտակի շրջանում, բախումների մեջ են մտել նոր իշխանությանը ենթակա սիրիական բանակի հետ, հայտնում է Syria TV հեռուստաալիքը՝ հղում անելով Սիրիայի Արաբական Հանրապետության (ՍԱՀ) բանակի 72-րդ բրիգադի իր ռազմական աղբյուրին:

«ՍԴՈՒ-ն գրոհել է դիրքերը Թիշրին ամբարտակի ուղղությամբ: Մեր դիրքերը գրոհի են ենթարկվել ամբարտակի շրջանում՝ Սիրիաթել բարձունքի վրա»,- հեռուստաալիքը մեջբերում է աղբյուրի խոսքը:

ՍԱՀ բանակին հաջողվել է վերականգնել վերահսկողությունը երկու հենակետերի նկատմամբ, որոնք ավելի վաղ գրավվել էին քրդերի կողմից:

«Դաժան մարտերից հետո դեպքի վայր են ուղարկվել բանակի ուժեղացման մեծ շարասյուներ»,- նշում է աղբյուրը:

Քրդերի եւ բանակի միջեւ զինված լարվածության սրման պատճառը հեռուստաալիքը չի հստակեցնում:

## ԲԱՆԱԿՑՈՒՄ ԵՆ

Միացյալ Նահանգների նախագահ Դոնալդ Թրամփը Պուտինի հետ զրույցից առաջ բանակցություններ է վարել Վլադիմիր Զելենսկիի հետ: Այս մասին հաղորդում են ՏՍՆ-ի աղբյուրները:

Կայքի տեղեկություններով՝ կողմերը խոսում են այն մասին, թե ինչ քայլեր են անհրաժեշտ պատերազմն ավարտելու համար:

Այժմ, ըստ աղբյուրների տեղեկությունների, պետք է կայանա Թրամփի եւ Պուտինի հեռախոսազրույցը, որից հետո Զելենսկին եւ Թրամփը պայմանավորվել են եւս մեկ անգամ զրուցել՝ իրենց հետագա գործողությունները համաժամանակացնելու համար:

ԻՐԱՎԱՊԱՀՆԵՐԸ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՏՈՒՆ ԿՄՏՆԵ՞Ն

# ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐ

**Մայիսի 15-ին Էջմիածնի ՔՊ-ական քաղաքապետ Դիանա Գասպարյանը հայտնեց, որ հրաժարական է տալիս: Կուսակիցները նրա հրաժարականի պատճառների մասին չեն խոսում՝ նշելով, որ Գասպարյանի ներկայացրած պարզաբանումներին ավելացնելու ոչինչ չունեն:**

37-ամյա Դիանա Գասպարյանը, որի ընտանիքի անդամները նրա պաշտոնավարման ընթացքում տարբեր աղմկահարույց պատմությունների մեջ էին հայտնվել, հիմա որոշեց հրաժարական տալ՝ պատճառաբանելով, թե 7 տարվա պաշտոնավարումից հետո որոշել է ժամանակն այսուհետեւ նվիրել ընտանիքին:

Մինչ քաղաքապետ Գասպարյանը հրաժարականի պատճառների մասին է խոսում, Հակակոռուպցիոն կոմիտեն գործի է անցել, ու առաջիկայում Էջմիածնի քաղաքապետ Դիանա Գասպարյանի ընտանիքի շուրջ աղմկահարույց գործընթացներ կսկսվեն:

Իսկ ինչ գործընթացների ու մեղադրանքների մասին է խոսքը, եւ առհասարակ ինչ վարույթով է Հակակոռուպցիոն կոմիտեն մտնում Գասպարյանի տուն:

Եվ այսպես՝ 2024 թվականին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն, ուսումնասիրելով «Հետք»-ի՝ «Դիանա Գասպարյանի սկեսուրն Էջմիածնում ապօրինի շինարարություն է սկսել» հոդվածը, նյութերն ուղարկել է գլխավոր դատախազություն, որի հիման վրա նախաձեռնվել է քրեական վարույթ: Գլխավոր դատախազությունից հաստատել էին քրեական վարույթ նախաձեռնվելու փաստը եւ հայտնել, որ այն միացվել է «Հետք»-ի նույն հրապարակման հիման վրա ավելի վաղ հարուցված վարույթին:

Նշենք, որ Հակակոռուպցիոն կոմիտեում է քննվում՝ պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները չարաշահելու, ինչպես նաեւ հայտարարագրում կեղծ տվյալներ ներկայացնելու կամ տվյալները թաքցնելու դրվագներով նախաձեռնված քրեական վարույթը:

Հակակոռուպցիոն կոմիտեն քրեական վարույթ է նախաձեռնել «Հետքի» հոդվածի հիման վրա: Վաղարշապատ համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը հարցաքննվել է Հակակոռուպցիոն կոմիտեում

նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում:

Ավելի վաղ ArmLur.am-ը գրել էր, որ Վաղարշապատ համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանի ամուսնու ընտանիքն Էջմիածնում առանձնատների կառուցման բիզնես է սկսել: Այդ նպատակով գործընկերների օգնությամբ ձեռք է բերվել համայնքային հողատարածք եւ, չսպասելով թույլտվություններին, հողային եւ բետոնացման աշխատանքներ են կատարվել:

«Նարե Պլյուս» ՍՊԸ-ին տրվել է շինարարության 20 թույլտվություն՝ բնակելի տներ կառուցելու համար: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 1,2 հեկտար, որը բաժանված է 59 առանձին հողամասերի: «Նարե Պլյուս» ընկերության միակ սեփականատերը համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանի սկեսուրն է՝ ավագանու անդամ Արամայիս Միրզոյանի մայրը:

Վաղարշապատ համայնքի ավագանին 2022թ. հունիսի 24-ին արտահերթ նիստով որոշել էր աճուրդային եղանակով վաճառել Վաղարշապատ համայնքի սեփականությունը հանդիսացող Վ. Տերյան փողոց, 971/8 հասցեում գտնվող 0.9 հա մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը՝ շինություններ կառուցելու համար:

Յուրաքանչյուր քառակուսի մետր հողամասի մեկնարկային գինը սահմանվել է տվյալ հողի կադաստրային արժեքի 200%-ի չափով՝ ընդհանուր 51 մլն 975 հազ. դրամ (1 քմ՝ 5775 դրամ): Վաճառքն իրականացրել է համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովը:

Աճուրդի միակ մասնակիցը եղել է Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու անդամ Շահեն Շահինյանը: Նա առաջարկել է հենց մեկնարկային գինը՝ 51 մլն 975 հազ. դրամ եւ հաղթող ճանաչվել: Դրանից հետո համայնքից գնված հողի սեփականատեր է դարձել Դիանա Գասպարյանի ամուսնու մայրը:

Շահեն Շահինյանը Արմավիրի մարզի Արաքս խոշորացված համայնքի ավագանու անդամ է ընտրվել 2021թ. դեկտեմբերի 5-ին՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համամասնական ցուցակով:

Շահինյանը Վաղարշապատի ավագանու անդամ Արամայիս Միրզոյանի հոր՝ Աշոտ Միրզոյանի աշխատակիցն է, այսինքն՝ համայնքապետ Դիանա Գասպարյանի սկեսրայրի:

Շահեն Շահինյանը, որպես ավագանու անդամ, չի հայտարարագրել Էջմիածնի համայնքապետարանից գնած հողերի ընդհանուր արժեքի՝ մոտ 57 մլն 484 հազ. դրամի չափով գումար: Հետեւաբար, եզրակացրել էինք, որ նման գումար նա չի ունեցել, ինչը ողջամիտ կասկած է առաջացրել, որ ձեռք բերված հողատարածքների իրական սեփականատերն ի սկզբանե համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանի ամուսնու՝ Արամայիս Միրզոյանի ընտանիքն է եղել: Շահեն Շահինյանը չէր թաքցրել, որ հողատարածքը գնելու համար գումարը փոխառությամբ վերցրել էր Աշոտ Միրզոյանից:

Եվ ահա այս վարույթով էլ առաջիկայում Հակակոռուպցիոն կոմիտեն գործընթաց է սկսելու Դիանա Գասպարյանի ընտանիքի անդամների նկատմամբ ու չեն բացառվում՝ լինեն ձերբակալություններ: Ստացվում է, որ Գասպարյանի հրաժարականը պատահական չէ, իրավապահները քաղաքական վերնախավին զեկուցել են Գասպարյանի ընտանիքի շուրջ աղմկահարույց կոռուպցիայի վարույթի մասին ու արդյունքում Գասպարյանին քաղաքական վերնախավը sms է գրել՝ դիմում գրել ու հեռանալ, որից հետո Հակակոռուպցիոն կոմիտեն կանցնի գրոհի:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

## ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՄԻԳՐԱՑԻԱ

ՀՀ ազգային անվտանգության ծառայության հակահետախուզության գլխավոր վարչությունում ստացված օպերատիվ տվյալների հիման վրա ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների հետ փոխգործակցության արդյունքում բացահայտվել է անօրինական միգրացիայի կազմակերպման հերթական դեպքը:

Մասնավորապես, պարզվել է, որ Ա.Հ-ն, դեռեւս չպարզված անձի հետ նախնական համաձայնությամբ, խմբի կազմում, շահադիտական նպատակով՝ 22.000 ԱՄՆ դոլարի դիմաց, 2024-2025 թվականների ընթացքում կազմակերպել է Վ.Ք-ի անօրինական միգրացիան, այն է՝ «Շենգեն համաձայնության երկրներ» մուտքի եւ գտնվելու պատշաճ թույլտվություն ստանալու համար դեռեւս չպարզված հանգամանքներում իրացնելու նպատակով, այլ անձի հետ նախնական համաձայնությամբ, խմբի կազմում պատրաստել է վերջինիս կողմից «DANI GROUP» ՍՊ ընկերության աշխատակից հանդիսանալու եւ «Հայէկոնոմբանկ» ԲԲ ընկերությունում բանկային հաշիվ ունենալու վերաբերյալ իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր հավաստող եւ իրավունք վերապահող բովանդակությամբ կեղծ փաստաթղթեր, որոնք փոխանցել է Վ.Ք.-ին, ով դրանք, ի թիվս այլ փաստաթղթերի, ներկայացրել է Հունաստանի Հանրապետության դեսպանատուն, ինչի հիման վրա վերջինիս տրամադրվել է «Շենգենյան համաձայնության երկրների» մուտքի թիվ 010618353 արտոնագիրը եւ նա 2024 թվականի դեկտեմբերի 25-ին, օգտագործելով հիշյալ կեղծ արտոնագիրը, առանց սահմանված փաստաթղթերի եւ պատշաճ թույլտվության հատել է ՀՀ պետական սահմանը եւ մեկնել ՀՀ-ից՝ նպատակ ունենալով այն օգտագործել հետագայում ԱՄՆ մուտք գործելու համար:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ներկայացված առերեւույթ հանցանքի մասին հաղորդման եւ կից ներկայացված համապատասխան փաստը հավաստող նյութերի հիման վրա ՀՀ քննչական կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակներում իրականացվել են քննչական եւ վարութային այլ գործողություններ:

Ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա, քննիչի միջնորդությամբ, հսկող դատախազի կողմից որոշում է կայացվել Ա.Հ-ի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին, եւ վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել տնային կալանքը, 2.000.000 ՀՀ դրամ գրավը եւ բացակայելու արգելքը:

Քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է ՀՀ քննչական կոմիտեի սահմանադրական կարգի հիմունքների եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում, իրականացվում են քննչական անհրաժեշտ գործողություններ եւ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ դեպքի բոլոր հանգամանքները, հանցավոր խմբում ներգրավված անձանց ամբողջական շրջանակը պարզելու եւ նրանց նկատմամբ քրեաիրավական ներգործության միջոցներ կիրառելու համար:

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը հորդորում է ՀՀ քաղաքացիներին արտերկիր մեկնելիս եւ վերադառնալիս զերծ մնալ անօրինական միգրացիայի գործընթացներում ներգրավվելուց:

ԻՆՉ Է ՊԱՏՄՈՒՄ ՀԱՅՐԸ

# ՍՅՈՒՆԻՔՈՒՄ ՍՊԱՆՎԱԾԸ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑ ԷՐ

**ՀՀ քննչական Կոմիտեն հայտնեց, որ նախաքննության ավարտ է հայտարարվել մի խումբ անձանց կողմից ծեծի հետեւանքով մահացած անձի գործով:**

ArmLur.am-ին հայտնի է դարձել, որ սպանվածը Մկրտիչ Նավասարդյանն է: Վերջինիս հայրը՝ Սիրակ Նավասարդյանը, դեպքից հետո հայտնել էր. «Որդիս 2 երեխաների հայր է, 2020 թվականի 44-օրյա պատերազմի մասնակից է: Իր մեքենայով կամավոր մեկնել է ռազմաճակատ, զինամթերք է կրել ու անփորձանք վերադարձել է տուն: Հիմա մի քանի բաշիբոզուկների պատճառով տղես մահամերձ պառկած է: Եթե պատերազմի դաշտում զոհվեր կամ վիրավորվեր... Հասկացանք՝ վիճել են, բայց կարելի՞ է 10 հոգի մարդ բերել 1 հոգու վրա: Փոքր եղբայրը եկել է, որ հանի, հետեւից բութ գործիքով նրա գլխին էլ են տվել»:

Հիշեցնենք, որ ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության՝ մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչությունում քննվող քրեական վարույթի նախաքննության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ 2024 թվականի հոկտեմբերի 9-ին Մեղրի-Երեւան ավտոճանապարհի հատվածում մի խումբ անձինք Վ.Ն.-ի առողջությանը պատճառել են թեթեւ վնաս, իսկ Մ.Ն.-ի նկատմամբ կատարել են ֆիզիկական ներգործություն: Հաջորդ օրը խմբի անդամները Մ.Ն.-ին ապօրինաբար զրկել են կյանքից եւ Վ.Ն.-ի առողջությանը պատճառել են թեթեւ վնաս:

Հ.Բ.-ի եւ Գ.Ա.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով (առողջությանը թեթեւ վնաս պատճառելը) (2 դրվագ), 195-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով (ֆիզիկական ներգործությունը), 155-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով (սպանությունը): Երկուսի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը:

Հ.Բ.-ի եւ Գ.Ա.-ի վերաբերյալ քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին:

Ծանուցում. հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

*Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ*

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 16-ից 19-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 224 դեպք, որից 7-ը՝ նախկինում կատարված:*

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՄԱՐԶ

### ԱՐԴԱՐԱՑՈՒՄՆԵ՞Ր, ԹԵ՞ ԱՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

5 օր առաջ Բերդ համայնքի Պառավաքար գյուղի ջրամբարում ձկների զանգվածային անկում է եղել: Բերդ համայնքի բնակիչները կասկած են հայտնում, որ ձկները կարող էին սատկել Պառավաքարի ձեռնոցի գործարանից քիմիական արտանետումների հետեւանքով: Բերդ համայնքի բնակիչները հայտնում են, որ անցած տարվա աշնանը Բերդ քաղաքի ձեռնոցի գործարանից Տավուշ գետ նետված արտանետումների հետեւանքով գետում ձկների զանգվածային անկում է եղել: Նույն պատճառով Բերդ քաղաքի այգիները Տավուշ գետի ջրով ոռոգելուց հետո պտղատու ծառերի բների մոտ փառակալում է առաջանում: Բերդի բնակիչները հայտնում են, որ ձեռնոցի գործարանից արտադրական կեղտաջրերը թափվում են գետ: Նրանց խոսքերով՝ ձեռնոցի հումքի համար նախատեսված կոճղերը գործարանը հետո անվճար տրամադրում է գործարանի աշխատողներին, նրանք դրանք այրում են, քաղաքում տարածվում է քիմիական ինչ-որ նյութի ծանր հոտ: Բերդի բնակիչները կասկածներ ունեն, որ համայնքում մանկական հիվանդություններով հիվանդացածների թիվն աճել է , եւ դա կապ ունի ձեռնոցի գործարանից արտանետումների հետ: Պառավաքարի վարչական ղեկավար Սարգիս Մարգարյանը հաստատեց, որ գյուղի ջրամբարում ձկների զանգվածային անկում է եղել, ասաց, որ հիմա էլ ջրամաբարի ափին «շշմած» ձկներ կան: Նա նշեց, որ Պառավաքարի ձեռնոցի գործարանի արտանետումները ձոր են լցվում, Հախում գետ չեն հասնում, ջրամբար չեն լցվում: Մարգարյանը հայտնեց, որ ջրամբարում ձկների անկման դեպքին բնապահպանական տեսչությունը տեղյակ է: Մեր թղթակիցը զանգահարեց Բերդի ձեռնոցի գործարանի տնօրեն Միքայել Եզեկյանին: Նա ասաց, որ իրենք արտադրության մեջ միայն բնական կաուչուկ են օգտագործում, մնասակար արտանետումներ չեն անում, խորհուրդ տվեց պարզել, թե Պառավաքարի ջրամբարում ձկների անկումը կապ ունի՞ այնտեղ պայթուցիկի օգտագործմամբ ձկնորսության հետ: Եզեկյանը սխալ համարեց մանկական հիվանդությունները կապել իրենց գործարանի գործունեության հետ, հայտնեց նաեւ, որ Բերդ քաղաքի ձեռնոցի գործարանի գործունեությունը ժամանակավորապես դադարեցված է: Մ. Եզեկյանը շեշտեց այն կարեւոր դերը, որ իրենց ձեռնարկությունը կատարում է Բերդի սահմանագոտում աշխատատեղեր ապահովելու համար: Կարծում ենք, որ բնապապանական պետական տեսչությունը պետք է համալիր ուսումնասիրություններ, լաբորատոր հետազոտություններ նախաձեռնի, որոնց արդյունքով պարզի, թե Բերդ համայնքում գործող ձեռնոցի գործարանների արտանետումները վտանգավո՞ր են շրջակա միջավայրի, բնակիչների առողջության համար, թե՞ ոչ:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

## ԻՆՉ ՓՈԽՎԵՑ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՓԱԿՎԵԼՈՒՑ ՀԵՏՈ

# ԱՆԴՐԱԴԱՐՁԵԼ Է ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԵՎ ՄՅՈՒՍ ԳԵՐԻՆԵՐԻՆ

**GB News-ը Ռուբեն Վարդանյանի եւ մյուս հայերի ապօրինի կալանքին է անդրադարձել: Հրապարակումը վերնագրվել է «Քրիստոնյայի ահազանգ. հոր «ապօրինի» կալանքի եւ «էթնիկ զտման» հետեւանքով ավերված եկեղեցիների պայմաններում «մեզնից ոչ ոք ապահով չէ»:**



Հոդվածը ներկայացնում ենք թարգմանված՝ որոշ կրճատումներով:

«Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող փաստաբանները GB News-ին հայտնել են, որ Ռուբեն Վարդանյանին կալանքի ընթացքում թույլ չեն տվել օգտվել Աստվածաշնչից:

Հարեւան Ադրբեջանում կալանավորված հայ քրիստոնյա բարերարի որդին հայտարարել է, որ «մեզնից ոչ ոք ապահով չէ»՝ նշելով, որ իր հայրը «էթնիկ զտման» զոհ է:

Հայաստանի ամենահարուստ մարդկանցից մեկին՝ Ռուբեն Վարդանյանին, առաջադրել են 42 մեղադրանք: Նրա որդու՝ Դավիթի բնութագրմամբ դա «կեղծ դատավարություն» է՝ «դատավարականմի շարք խախտումներով»: Ռուբենը միջազգային ուշադրության կենտրոնում էր հայտնվել, երբ հիմնել էր «Ավրորա» մարդասիրական մրցանակը: Ռուբենի որդի Դավիթը GB News-ին պատմել է, որ իր հայրն այսօր ապօրինի կալանքի տակ է Ադրբեջանում:

Դավիթը քննադատում է միջազգային լրատվամիջոցներին՝ իր հորն առնչվող իրողությունների նման դեպքերի վրա «աչք փակելու» համար: Նա ասում է. «Մենք նրա կալանավորման մասին իմացանք սոցցանցերից՝ 2023 թվականի սեպտեմբերի 27-ին, ինչը շատ նպատակային քայլ էր Ադրբեջանի կառավարության կողմից՝ յուրաքանչյուր հայ քրիստոնյային ցույց տալով, որ մեզնից ոչ ոք ապահով չէ»:

Չնայած կալանքին, Դավիթի խոսքով՝ իր հայրը շարունակում է «ամուր» մնալ:

«Նա մի քանի անգամ նշել է, որ չի ցանկանում բողոքել պահման պայմաններից, քանի որ դա կշեղի ուշադրությունն ամբողջ գործընթացի ապօրինի լինելուց: Մենք շաբաթական առավելագույնը մեկ-երկու անգամ կարողանում ենք նրա հետ մեկ-երկու րոպեանոց զանգեր ունենալ, բայց ոչ պարբերական: Նախկինում նրա հետ խոսում էինք Կարմիր խաչի միջոցով: Սակայն վերջերս հայտարարվեց, որ այդ երկրում Կարմիր խաչի գրասենյակը փակվում է, ինչն էլ ավելի կսահմանափակի մեր հաղորդակցումը: Դուստրս ծնվել է նրա կալանքի ընթացքում: Հույս ունենք, որ մոտ ապագայում նա կկարողանա հանդիպել նրան: Բայց նա պապ դարձավ առանց թոռնուհուն տեսնելու, ինչը մեզ համար ցավալի է»:

Փաստաբան Ջարեդ Գենսերը GB News-ին Վաշինգտոնից հայտնել է, որ Ռուբենին զրկել են Աստվածաշնչից օգտվելու հնարավորությունից: «Սա հակասում է Ադրբեջանի ներկայացրած թեզին, թե այս հակամարտությունը կապ չունի նրանց քրիստոնյա լինելու փաստի հետ, եւ թե այն տարածքների ապօրինի գրավման մասին է», - ասում է նա:

Գենսերը նաեւ քննադատում է համաշխարհային լրատվամիջոցներին՝ նշելով, որ կենտրոնացած լինելով Գազայի եւ Ուկրաինայի պատերազմների վրա՝ «անտեսվում» է տարածաշրջանի քրիստոնյաների ծանր վիճակը: Նա հավելում է. «Կովկասում տեղի ունեցած էթնիկ այս զտումը չի արժանացել համաշխարհային մեծ ուշադրության»:

Միաժամանակ նա հույս է հայտնում, որ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը, որը կարեւորել է հայ քրիստոնյաների ազատությանն ուղղված ջանքերը, քայլեր կձեռնարկի այդ ուղղությամբ, մինչդեռ Ադրբեջանի ներկայիս նախագահ Իլհամ Ալիեւը «հետաքրքրված չէ» խաղաղությամբ:

Փաստաբանն ընդգծում է. «Որպես Ռուբենին եւ մյուս բանտարկյալներին պաշտպանող կողմի համար մեր խնդիրն այն էր, որ ո՛չ Ադրբեջանը, ո՛չ Հայաստանը ցանկություն չունեին առաջնահերթ դարձնել Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցածը կամ իրենց քաղաքացիների ազատ արձակումը: Ալիեւը որեւէ քայլ ձեռնարկելու ոչ մի շահագրգռություն չունի, քանի որ այս ամենը նրա համար տարածաշրջանի էթնիկ զտման ուղղությամբ տասնամյակների ջանքերի արդյունք է»:

*Ն. ԱՂԱՍՅԱՆ*

## ԼՈՒՐԵՐ

### ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ՝ ՔԱՔՈՒՌՈՒՄ

Քրեական ոստիկանության Շիրակի մարզային վարչության ծառայողները ստացել էին տեղեկություն, որ սահմանափակ պատասխանատվությամբ մի ընկերություն, առանց թույլտվության եւ համապատասխան փաստաթղթերի, իրականացնում է ապօրինի արդյունահանում: Այս մասին հայտնում են ՆԳՆ-ից: Ստուգմամբ պարզվել է, որ Ջաջուռ գյուղի վարչական տարածքի ավելի քան չորս հեկտար հողատարածքում արդյունահանման թույլտվություն ընկերությանը տրվել է 2020 թվականին, ու թեեւ այս տարվա մարտի 21-ին թույլտվության ժամկետը լրացել է, սակայն օգտակար հանածոյի արդյունահանումն ու վաճառքը շարունակվել է:

Պարզվել է նաեւ, որ արդյունահանումն իրականացվել է խախտումներով, մասնավորապես՝ խճաքարի պահեստավորումն ընդգրկել է տրամադրվածից ավելի տարածք: Պետությանը պատճառված վնասի չափը պարզվում է:

Ընդերքի պահպանման կամ օգտագործման պահանջները խախտելու հատկանիշներով Ախուրյանի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ: Հանգամանքները նախաքննությամբ պարզվում են:

### ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀԸ ՔԱՂՑԿԵՂ ՈՒՆԻ

ԱՄՆ նախկին նախագահ՝ 82-ամյա Ջո Բայդենի մոտ ախտորոշվել է քաղցկեղ: Այս մասին հայտնել է նրա գրասենյակը: Բայդենը, ով պաշտոնաթող է եղել այս տարվա հունվարին, նախորդ շաբաթ դիմել էր բժշկի առողջական խնդիրների պատճառով: Ուրբաթ օրը կատարված հետազոտություններից հետո նրա մոտ ախտորոշվել է ագրեսիվ տեսակի քաղցկեղ՝ Gleason սանդղակով 9 միավոր՝ ինչը վկայում է հիվանդության բարձր աստիճանի մասին: Սա նշանակում է, որ քաղցկեղային բջիջները կարող են արագ տարածվել:

Բայդենի գրասենյակը հայտնել է, որ չնայած ախտորոշումը լուրջ է, սակայն քաղցկեղը հորմոնազգայուն է, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետ բուժում իրականացնել: Այժմ Բայդենն ու ընտանիքը քննարկում են բուժման տարբերակները:

Նախագահի առողջական վիճակի մասին լուրից հետո նրան աջակցություն են հայտնել տարբեր քաղաքական գործիչներ: Դոնալդ Թրամփը իր Truth Social հարթակում գրել է, որ նա եւ Մելանիա Թրամփը «տխրել են» Բայդենի ախտորոշման մասին լուը լսելուց հետո եւ մաղթել են շուտափույթ ապաքինում:

Նախկին փոխնախագահ Քամալա Հարիսը X-ում (նախկին Twitter) գրել է, որ նա եւ իր ամուսինը՝ Դագ Էմհոֆը աղոթում են Բայդենի ընտանիքի համար: «Ջոն մարտիկ է, եւ ես գիտեմ, որ նա այս մարտահրավերն ընդունելու է իր ուժով, տոկունությամբ ու լավատեսությամբ»,- գրել է նա:

Բարաք Օբաման եւս գրել է, որ նա ու Միշելը մտածում են Բայդենի եւ նրա ընտանիքի մասին: «Ոչ ոք այնքան չի նպաստել քաղցկեղի դեմ պայքարին, որքան Ջոն», - նշել է Օբաման՝ հիշեցնելով 2016-ին նախաձեռնած «քաղցկեղի լուսնաթռիչք» ծրագիրը, որի ղեկավարումը վստահվել էր Բայդենին:

Քաղցկեղի մասնագետ Դոկտոր Ուիլյամ Դահութը նշել է, որ ոսկորներում տարածված քաղցկեղը սովորաբար անբուժելի է, սակայն սկզբնական փուլում բուժման արդյունքում, հիվանդները կարող են երկար ապրել: Բայդենը պաշտոնաթողությունից հետո հիմնականում հեռու է մնացել հանրային ուշադրությունից: Ապրիլին նա ելույթ է ունեցել Չիկագոյում անցկացված համաժողովում, իսկ մայիսին հարցազրույց է տվել BBC-ին՝ խոսելով ընտրություններից հրաժարվելու դժվար որոշման մասին: Նշենք, որ Բայդենը 2015 թվականին կորցրել էր իր ավագ որդուն՝ Բո Բայդենին, ով մահացել էր ուղեղի քաղցկեղից:

*ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 36 պատահար. 63 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## «ՅՈՒՆԻԲԱՆԿ»

«Յունիբանկի» «Էրեբունի» մասնաճյուղն իր աշխատանքը կվերսկսի 02.06.2025թ.

Հարգելի հաճախորդներ,

տեղեկացնում ենք, որ «Յունիբանկի» «Էրեբունի» մասնաճյուղում /Երեւան, Էրեբունու փ.20, 50/ վերանորոգման աշխատանքների ժամկետը երկարաձգվել է մինչեւ 02.06.2025թ.:

Հայցում ենք Ձեր ներողամտությունը պատճառած անհարմարությունների համար եւ առաջարկում այդ ժամանակահատվածում սպասարկվել «Յունիբանկի» մոտակա՝ «Տաշիր Կենտրոն» /Երեւան, Խորենացի 33/, «Հայրենիք» /Երեւան, Գարեգին Նժդեհ 34, 4/1/ եւ «Գարեգին Նժդեհ» /Երեւան, Արշակունյաց պող., 34/3 (Yerevan Mall)/ մասնաճյուղերում:

«Յունիբանկի» մասնաճյուղերի հաստիքներին եւ աշխատաժամերին կարող եք ծանոթանալ՝ այցելելով www.unibank.am կայքը:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

Տեղեկատու հեռ.՝ (+37410) 71 22 22, (+37410) 59 55 55:

## ԻՆՏԵՐՆԵՏ ՄՈՒՏՔԸ ԿԼԻՆԻ ԱՆՁՆԱԳՐՈ՞Վ

Իսպանիան, Հունաստանը եւ Ֆրանսիան առաջարկում են սահմանել սոցիալական ցանցերի օգտագործման նվազագույն տարիքը ԵՄ մակարդակով: Առաջ է քաշվել այն պնդումը, թե սոցիալական ցանցերը առողջական խնդիրներ են եւ կախվածություն են առաջացնում երեխաների մոտ:

Առաջարկվում է երեխաներին ինտերնետ մուտք թույլատրել 15 տարեկանից:

## ՆԱՎԹԻ ԳՆԱՆԿՈՒՄ

Աշխարհի խոշորագույն նավթային ընկերությունները պատրաստվում են նավթահումքի գների երկարատեւ անկման (տասնամյակի ընթացքում երրորդը) եւ ձգտում են ներդրողներին հանգստացնել՝ նրանց վստահեցնելով, թե պատրաստ են վատագույնին: Այս մասին հաղորդել է Financial Times-ը (FT):

Հրատարակության տվյալներով՝ ExxonMobil-ի, Chevron-ի, Shell-ի, TotalEnergies-ի եւ BP-ի ղեկավարները «օգտագործել են եկամուտների մասին եռամսյակային հաշվետվությունները, որպեսզի ներդրողներին վստահեցնեն, թե նրանց հաշվեկշիռները կայուն են, եւ նրանք չեն շտապի ավելորդ ծախսերի եւ բաժնետերերի եկամուտների կրճատման հարցում»:

Chevron-ը, որն ավելի վաղ հայտարարել էր աշխատակիցների զգալի կրճատման պլանների մասին, ներդրողներին հավաստիացրել էր, որ նավթի մեկ բարելի դիմաց 60 դոլար գնի դեպքում ազատ դրամական միջոցների հոսքը կհասցնի 9 միլիարդ դոլարի: Shell-ն իր հերթին հայտարարել է, որ կկարողանա դիվիդենտներ վճարել, նույնիսկ եթե վառելիքի գինը իջնի մինչեւ 40 դոլար՝ հավելելով, որ դեռեւս չի փոխել իր ծախսերի պլանները: Ավելի վաղ նշված նախագծերի իրականացումը շարունակվում է, նշել է Shell-ի ֆինանսական տնօրեն Շինեդ Գորմանը:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» 4

# ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

**2025թ.-ի հունիսի 2-ին՝ ժամը 11:00-ին. կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից f. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում կանցկացվի աճուրդ հոլանդական եղանակով:**

Թիվ 18 լոտ՝ոսկյա զարդեր 12 գր. ընդհանուր քաշով 750 հարգի, լոտի մեկնարկային գինը 355.000 ՀՀ դրամ: Թիվ 19 լոտ՝ ոսկյա զարդ 8.3 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 8 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 185.000 ՀՀ դրամ: Թիվ 20 լոտ՝ոսկյա զարդ 5.8 գր. ընդհանուր քաշով 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 134.000 ՀՀ դրամ: Թիվ 21 լոտ՝ոսկյա ջարդոն 7.5 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 7.2 գր) 500 հարգի, լոտի մեկնարկային գինը՝140.000 ՀՀ դրամ: Թիվ 22 լոտ՝ոսկյա իրերի ջարդոն 4.8 գր. ընդհանուր քաշով, 958 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 182.000 ՀՀ դրամ: Թիվ 23 լոտ՝ոսկյա իրերի ջարդոն 13.6 գր. ընդհանուր քաշով, որից 5 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն (զուտ քաշը 4.5գր.) 500 հարգի՝ 87.700 ՀՀ դրամ, 8.6 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն (զուտ քաշը 4.8գր.) 585 հարգի՝ 110.000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝197.700 ՀՀ դրամ: Թիվ 24 լոտ՝ոսկյա իրերի ջարդոն 4.5 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 4.3 գր.) 550 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 93.500 ՀՀ դրամ: Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխությանը, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5%-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը՝ բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/: Հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը. նախավճարը՝ լոտի 5 %-ի չափով, վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ժամը 9:00-13:00 ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է դիմումի հիման վրա:

Հեռ. +374 43 00 42 27:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՎԵԼՎԱԾԸ ԿՐԿԻՆ ԹԱՐՄԱՑՎԵԼ Է

Idram&IDBank հավելվածը կրկին թարմացվել է. այս անգամ էլ նորությունը կհեշտացնի հաճախորդների առօրյան: Ինչպես յուրաքանչյուր նորության, այնպես էլ այս թարմացման հիմքում օգտատերերին լավագույն ծառայությունները մատուցելու գաղափարն է: Վերջին թարմացմամբ (iOS - 4.0.97 եւ Android - 3.7.98) կարելի է թե՛ հետաձգել Rocket Line վարկերի վճարումը, թե՛ միավորել մի քանի Rocket Line վարկ մեկում:

Վճարման հետաձգումը ենթադրում է ընտրված վարկի մնացորդային պարտքի չափով նոր Rocket Line վարկի տրամադրում եւ ընտրված վարկի ավտոմատ մարում: Նոր վարկը նույնպես պատկերվում է հավելվածի բանկինգի Rocket Line վարկեր բաժնում՝ Rocket Line (վճարումը հետաձգված) անվանմամբ:

Ինչպե՞ս հետաձգել վարկը՝

Rocket Line վարկի մանրամասներ պատուհանից սեղմե՛ք «Հետաձգել վճարումը» կոճակը,

նոր պատուհանում ծանոթացե՛ք ծառայության պայմաններին եւ տվե՛ք համաձայնություն՝սեղմելով «Հաստատել» կոճակը,

հաջորդ քայլով դիտե՛ք նոր վարկի մանրամասները, տվե՛ք համաձայնություն բոլոր դրույթներին եւ վերջ:

Դե, իսկ Rocket Line-ի միավորումը իրենից ենթադրում է ընտրված վարկերի մնացորդային պարտքի չափով նոր Rocket Line վարկի տրամադրում եւ ընտրված վարկերի ավտոմատ մարում: Նոր վարկը կրկին կպատկերվի հավելվածի Բանկինգ բաժնի Rocket Line վարկեր բաժնում՝ Rocket Line (միավորված) անվանմամբ:

Իսկ ինչպե՞ս միավորել վարկերը՝

գլխավոր էջում սեղմե՛ք Rocket Line-ի սահմանաչափի վերեւի + կոճակը,

նոր պատուհանում սեղմե՛ք «Միավորել վարկերը», ապա ընտրե՛ք Rocket Line-երը, որոնք ցանկանում եք միավորել,

ընտրե՛ք նոր Rocket Line-ի ժամկետը, տվեք անհրաժեշտ համաձայնությունը, եւ վերջ:

Հիշեցնենք, որ Ձեր Rocket Line սահմանաչափով կարող եք վճարել ավելի քան 23.500 վաճառակետերում, այսինքն՝ ամենուր, ուր կա «Իդրամով» վճարման հնարավորություն, իսկ Rocket Line 0%-ով վճարելու հնարավորությամբ վաճառակետերի թիվը վաղուց գերազանցում է 10.000-ը:

Ընկերությունները վերահսկվում են ՀՀ ԿԲ Կողմից

## ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

«Էջմիածնի արդեն նախկին քաղաքապետ Դիանա Գասպարյանի ընտանիքի շուրջ նոր զարգացումները անխուսափելի են:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ աղմկահարույց սպանության գործի վերաբերյալ իրավապահները խիստ կասկածներ ունեն Դիանա Գասպարյանի ամուսնու հետ կապված:

Ավելին՝ իրավապահ համակարգը այնպես է տրամադրված նախկին քաղաքապետի ամուսնու դեմ, որ չի բացառվում անգամ՝նրան ձերբակալեն:

Հիշեցնենք, որ մարտի 25-ին իրավապահները մտել են Էջմիածնի քաղաքապետ Դիանա Գասպարյանի տուն ու խուզարկություն սկսել՝ պայմանավորված մարտի 22-ին քաղաքապետի ամուսնուն պատկանող գազալցակայանի կրակոցներով, ինչի հետեւանքով մեկ անձ սպանվեց: Իրավապահները փնտրում են ենթադրյալ մարդասպանին՝ «Ճապ» մականունով 33-ամյա Կարեն Բաղալյանին, որը դեպքից հետո անհետացել է ու մինչ օրս չկա: Այս սպանության գործով իրավապահները խուզարկել են Էջմիածնի քաղաքապետի տունը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ քննչական կոմիտեի քննիչները փորձել են առգրավել Էջմիածնի քաղաքապետ Դիանա Գասպարյանի ամուսնու անձնական հեռախոսը, սակայն նա հրաժարվել է հեռախոսը տրամադրել քննիչին ու հենց քննչական կոմիտեում կոտրել է այն: Այս հանգամանքը ավելի է խստացրել իրավապահների կասկածները:

Արդյունքում՝ այս դեպքերից 1,5 ամիս անց (կրակոցները տեղի էին ունեցել մարտի 22-ին, Էջմիածնի քաղաքապետի տան խուզարկությունը՝մարտի 25-ին) Էջմիածնի քաղաքապետ Դիանա Գասպարյանը ստիպված եղավ հրաժարական տալ:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

## 2 ԾԱՌԱՅՈՂ ՎԻՐԱՎՈՐՎԵԼ Է

Երեկ ավտովթար է տեղի ունեցել Կոտայքի մարզում: Ժամը 08:40-ի սահմաններում Աբովյան-Նոր Հաճն ավտոճանապարհին՝ ժողովրդին հայտնի Աբովյանի կամրջի հարեւանությամբ, ճակատ ճակատի բախվել են Opel Combo եւ Opel Astra մակնիշի ավտոմեքենաները: 3 հոգի տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով տեղափոխվել են «Աբովյան» բժշկական կենտրոն: Վիրավորներից 2-ը ծառայում են ՀՀ ՊՆ N զորամասում:

*●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

## ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՄԱՏԵՂ ԱՌԱՋԻՆ ՖԻԼՄԸ

# ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱԿԱՆ ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ Ա. ԳՅՈՒԼԵՐԻՆ

**Պոլսահայ աշխարհահռչակ լուսանկարիչ-լրագրող Արա Գյուլերին նվիրված կինեմատոգրաֆիական հարգանքի տուրք «Բարեւ» կենսագրական խաղարկային լիամետրաժը կդառնա Հայաստանի եւ Թուրքիայի կողմից համատեղ արտադրվող առաջին ֆիլմը:**

Մայիսի 16ին Լոս Անջելեսում լույս տեսնող Variety-ն հոդված է հրապարակել պրոդյուսերներ Անի Գալստյանի եւ Էլա Ալամաչի կողմից՝ Ֆիլմարտադրողների Համահայկական ֆեդերացիայի տաղավարում ստորագրված հայկական արմատներով լեգենդար լուսանկարիչ Արա Գյուլերի կյանքը նկարագրող «Բարեւ» վերնագրով կենսագրական ֆիլմի համատեղ արտադրության պայմանագրի մասին:

«20-րդ դարի պատկերների լեզվով պատմություններ պատմող հայ լուսանկարիչ Արա Գյուլերի կյանքը էկրան է բարձրացվում «Բարեւ» վերնագրով ֆիլմով»՝ գրում է Variety-ն, որ նախկինում երբեք չէր անդրադարձել Հայաստանի ներկայությանը Կաննում: «Թուրքիայի եւ Հայաստանի կինեմատոգրաֆիստների կողմից ստեղծվող խաղարկային լիամետրաժ առաջին ֆիլմով նշանավորված պատմական այս իրադարձությունը ներկայացնում է մշակութային համագործակցության եւ փոխըմբռնման փորձի համարձակ ու աննախադեպ մի ակտ»՝նշված է Նիք Վիվարելլիի «Բացառիկ» խորագրի ներքո լույս տեսած հոդվածում:

«Բարեւ» ֆիլմը ներկայացված է Կաննի 78-րդ կինոփառատոնի կինոշուկայի բաժնում: Ֆիլմը կարտադրվի թուրքական «Կարա Կեդի ֆիլմ», «Լույս Մեդիա» ընկերությունների եւ հայկական «Էնսո Ֆիլմզ» կինոընկերության կողմից ու կարող է խորհրդանշել կինեմատոգրաֆիական համագործակցության նոր դարաշրջան:

Ֆիլմի սցենարը ռեժիսորներ Էլա Ալյամաչի եւ Արեն Պերդեցու հեղինակմամբ մշակվել է Արա Գյուլերի կենդանության օրոք՝ նրա անձնական խնդրանքով եւ մասնակցությամբ: Արխիվային լայնածավալ հետազոտություններ եւ մշակումներ են իրականացվել Արա Գյուլերի արխիվային եւ հետազոտական կենտրոնում՝ «Դողուշ» խմբի հովանու ներքո:

Արա Գյուլերը, որին հաճախ անվանում են «Թուրքական Կարտիե-Բրեսոն», լուսանկարել է այնպիսի կուռքերի, ինչպիսիք են Սալվադոր Դալին, Ուինսթոն Չերչիլը, Ինդիրա Գանդին եւ համաշխարհային ճանաչում է ձեռք բերել Ստամբուլի ու Անատոլիայի իր հուզիչ դիմանկարների շնորհիվ: Տպավորիչ կարիերայի ընթացքում նա արժանացել է բազմաթիվ միջազգային պարգեւների, որոնց թվում՝ «Master of Leica», «the Legion d'Honneur» եւ «Key to the City of Paris» կոչումները, որոնք արտացոլում են նրա աննախադեպ ազդեցությունը լուսանկարչության եւ մշակութային դիվանագիտության վրա:

«Բարեւ» ֆիլմը հարգանքի տուրք է Գյուլերի ուշագրավ ժառանգությունը եւ ծառայում է որպես կինեմատոգրաֆիական պատմական իրադարձություն՝ հանդիսանալով այս մասշտաբի առաջին համատեղ արտադրությունը Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ:

Ֆիլմը ստացել է աջակցություն Թուրքիայի մշակույթի նախարարության կինոյի հիմնադրամի կողմից եւ նախնական գնման արտոնագիր՝ TRT-ի 12 Punto սցենարների մշակման հարթակի կողմից, որի ժյուրիի նախագահը եղել է Օսկարակիր ռեժիսոր Պավել Պավլիկովսկին:

«Ֆիլմի հեղինակները համոզված են, որ մշակութային համագործակցությունը կարող է լինել ապաքինման եւ փոխըմբռնման միջոց, եւ «Բարեւը» նպատակ ունի ցույց տալու կինոյի ուժը՝պատմական ժառանգությունը գնահատելու եւ իմաստավորելու ճանապարհին», եզրակացնում է Variety-ն:

1967 թվականի աշնանը տեղի ունեցած իրադարձությունները նկարագրող «Բարեւ» ֆիլմը պատմում է Արա Գյուլերի մասին, երբ նա գտնվում է իր կարիերայի բարձրակետում: 39 տարեկան Արան լուսանկարել է աշխարհի ամենահեռավոր անկյունները եւ ամենաազդեցիկ անհատներին: Այնուամենայնիվ, հոր հետ կարճատեւ ճանապարհորդությունը դեպի հոր ծննդավայր եւ նախնիների հայրենիք վերածվում է խորապես անձնական ոդիսականի, որը ընդմիշտ կփոխի նրան:

Ֆիլմի ռեժիսորներ՝ Էլա Ալյամաչ, Արեն Պերդեցի, սցենարիստներ՝ Էլա Ալյամաչ, Արեն Պերդեցի: Պրոդյուսերներն են Էլա Ալյամաչը, Հարություն Կուրանը:

Ֆիլմի Կո-պրոդյուսերներն են Անի եւ Հովհաննես Գալստյանները:

Ֆիլմը կենսագրական պատմական դրամա է:

*Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ*

ԱՐՎԵՍՏ ԵՎ ԺԱՄԱՆՑ

## ԵԿԵՂԵՑԻՆ ՀԻՄՆԱՀԱՏԱԿ ՈՉՆՉԱՑՐԵԼ ԵՆ

Ռազմավարական հետազոտությունների հայկական կենտրոնի ղեկավար Ալվինա Աղաբաբյանը հայտնում է. «Բերձորի ազատագրման երեսուներեք ամյակն է:

Այն Բերձորի, որ դեռ օկուպացված է թշնամու կողմից:

Մեծ հաշվով ինչո՞ւ եղավ այն ամենը, ինչ եղավ:

Որովհետեւ 1992-1994 թթ. Արցախի ազատագրմամբ փաստացի սկսված հայոց հողահավաքը ազգային գաղափար-նպատակի չվերածեցինք...

Նոր «մայիսի 18» մենք, իհարկե, կարող ենք ունենալ, միայն թե դրա ազգային գաղափարն է պետք, ազգային նպատակադրումը՝ այն Բ կետը, որը սահմանելուց հետո մեր ներկայիս Ա կետից դեպի Բ կետը տանող ճանապարհը վստահաբար գտնվելու է:

Բերձորի Սբ. Համբարձման եկեղեցին է, որն ադրբեջանցիք հիմնահատակ ոչնչացրել են»:

## ՎԱՄՊԻՐՆԵՐՆ ՈՒ ՍՏՐԿՈՒԹՅՈՒՆԸ՝ «ՄԵՂԱՎՈՐՆԵՐԸ» ՖԻԼՄՈՒՄ

Փոքրիկ անդրադարձ նոր ֆիլմի վերաբերյալ. երկժամանոց «Վամպիրային մարտաֆիլմի» սկզբում փորձում են հասկացնել, թե ամեն մի ճնշված ժողովուրդ ունի իր ուրույն երաժշտությունը, որը, առեղծվածի պես, դառնում է նրա օրհներգն ու սփոփանքը, ինչպես նաեւ հավատքի ապավենը: Սա, թերեւս, ֆիլմի լավագույն դրվագն է: Կադրերում զգացվում է, թե ռեժիսորը որքան ուշադիր է մոտեցել այդ դրվագի ստեղծմանը... Այնուհետեւ սկսվում է շիլաշփոթը:

Ի դեպ, ֆիլմի պրոդյուսերներից մեկը հայ է՝ Սեւակ Օհանյանը: Սակայն, հայերը ե՞րբ չեն սիրել բլյուզ ու ջազ: Ջգալ է տալիս նաեւ պատմական նմանությունն անցյալ դարի Ամերիկայի ճնշված սեւամորթների հետ:

Գլխավոր հերոսներին՝ երկվորյակ եղբայրներին, մարմնավորում է նույն դերասանը՝Մայքլ Բ. Ջորդանը: Կոնցեպտը հիշեցնում է Դե Նիրոյի «Իմաստուն տղաները» ֆիլմը, բայց եթե Դե Նիրոն մի բան չէր, Ջորդանը երկուսում էլ բացահայտ ահավոր է:

Ֆիլմի տեւողության առյուծի բաժինը նվիրված է երկրորդական կերպարների հետ ծանոթանալուն եւ նրանց հարաբերությունները ներկայացնելուն:

Հեյլի Ստեյնֆելդի խաղը փրկում է մյուս կերպարների անարտահայտիչ խաղը:

Գագաթնակետը հանգում է կրակոցների, վամպիրի, ստրկության, պատերազմի, գանգստերների եւ կրոնի շիլաշփոթի:

ՄԱՐԶԱԿԱՆ

## ԼԱՎԱԳՈՒՅՆ ՖՈՒՏԲՈԼԻՍՏ

Հայաստանի հավաքականի եւ «Սլովանի» ֆուտբոլիստ Տիգրան Բարսեղյանը ճանաչվել է Սլովակիայի առաջնության ընթացիկ մրցաշրջանի լավագույն ֆուտբոլիստ: Բարսեղյանն ավարտվող մրցաշրջանում խփել է 20 գոլ՝ գլխավորելով լավագույն ռմբարկուների ցուցակը: Նա նաեւ կատարել է 11 գոլային փոխանցում՝ դառնալով առաջնության լավագույն խաղացողներից մեկը: Բարսեղյանը «Սլովանի» կազմում դարձել է Սլովակիայի քառակի չեմպիոն: 2025 թվականի մայիսի 4-ին, «Ժիլինայի» դեմ խաղում, նա ավագի թեւկապով մասնակցել է հանդիպմանը, որի արդյունքում «Սլովանը» 4:3 հաշվով հաղթել է եւ ապահովել առաջնության չեմպիոնությունը:

## ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ Է ԿԱՏԱՐԵԼ

«Միլանի» 26-ամյա կիսապաշտպան Տեյանի Ռեյնդերսը իր ներկայացուցիչներին հստակեցրել է, որ իր համար առաջնահերթություն է «Մանչեսթեր Սիթի» տեղափոխությունն իրականացնելը՝ չնայած «Ռեալ Մադրիդի» հետաքրքրությանը: Այս մասին հայտնել է Sky Sport France-ը:

Խաղացողը երազում է խաղալ Խոսեպ Գվարդիոլայի գլխավորությամբ: Նշվում է, որ լինելով «Բարսելոնայի» տիկի-տակայի մեծ երկրպագու, կիսապաշտպանը գիտի, որ կկարողանա աճել եւ զարգանալ իսպանացու գլխավորությամբ: Հաղորդվում է նաեւ, որ անգլիացիներն արդեն հասել են ֆուտբոլիստի հետ անձնական պայմանների վերաբերյալ առաջին համաձայնություններին:

Այս մրցաշրջանում Ռեյնդերսը բոլոր մրցաշարերում անցկացրել է 53 խաղ, խփել 15 գոլ եւ կատարել հինգ գոլային փոխանցում: Ֆուտբոլիստի ներկայիս աշխատանքային պայմանագիրը ակումբի հետ նախատեսված է մինչեւ 2030 թվականի ամառը: Transfermarkt պորտալում տրամադրված տեղեկատվության համաձայն՝ ֆուտբոլիստի շուկայական արժեքը կազմում է 50 միլիոն եվրո:

## ԿԱՋՄԸ ԿՀԱՄԱԼՐՎԻ

Նիդեռլանդների հավաքականի եւ «Մանչեսթեր Յունայթեդի» հարձակվող Ջոշուա Զիրկզեն կարող է տեղափոխվել Իտալիայի առաջնություն, որտեղ նախկինում հանդես է եկել «Բոլոնիայի» կազմում: Corriere dello Sport-ի տեղեկություններով՝հարձակվողի ծառայություններով հետաքրքրված է Միլանի «Ինտերը»:

«Յունայթեդում» պատրաստ են բաց թողնել Զիրկզեին, եթե Ներառուրիները նրա տրանսֆերի համար առաջարկեն 40 միլիոն եվրո: 23-ամյա հարձակվողը այս մրցաշրջանում Անգլիայի Պրեմիեր լիգայում անցկացրել է 32 հանդիպում, խփել է երեք գոլ եւ կատարել մեկ գոլային փոխանցում:

*● Խամաճիկների պետական թատրոնում մայիսի 23, 24-ին տեղի կունենա «Փոքրիկն ու Կառլսոնը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1500 դրամ:*

# ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

## ՀՈԳԵՎՈՐ

**ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ Սուրբ Հաղորդությունը հոգեւոր սնո՞ւնդ է: Հետաքրքիր է, ինչո՞ւ է այն կենսական քրիստոնյայի համար:**

*Ամալյա Ամիրխանյան (46 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Սուրբ Հաղորդությունը կյանք է տալիս քրիստոնյային: «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե չուտեք Մարդու Որդու մարմինը եւ չըմպեք նրա արյունը, ձեր մեջ կյանք չեք ունենա (Հովհաննես 6:53): Սուրբ Պատարագի ընթացքում Հաղորդություն ստանալով՝ քրիստոնյաները միավորվում են Տիրոջ հետ: Անթթխմոր հացն ու անապական գինին Սուրբ Հոգու ազդեցությամբ վերածվում են Քրիստոսի Մարմնի եւ Արյան: Մաքրվելով մեր մեղքերից, Աստծուն մոտենալով, Նրա հետ շփվելով փորձում ենք գնալ դեպի կատարելություն, դեպի փրկություն:

Կատարելագործվելու, ինքդ քեզ գտնելու ճանապարհը:

*Տեր Հուսիկ քահանա Դոխոլյան*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Սուրբ Հաղորդությանն ամեն անգամ պետք է մոտենանք նորովի: Այն հնարավորություն է տալիս, որ դառնանք նոր մարդ, կանգնենք նոր իրողության առաջ: Որոշ մարդիկ այդ խորհրդին մոտենում են անարժանաբար, այն դիտում են՝ որպես սովորական երեւույթ, որն ամեն շաբաթ կրկնվում է, բայց Հաղորդությունը մեր հոգեւոր կյանքի ընթացքի մի մասն է, եւ մենք պետք է փորձենք ամեն անգամ մեկ աստիճանով բարձրանալ, կատարելագործվել:

*Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ*

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Խնդրում եմ ասեք. ամենամյա արձակուրդի համար աշխատավարձը ե՞րբ է վճարվում:**

*Անուշիկ Ֆեռոյան (39 տարեկան, օպերատոր)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Քաղաքացու հարցին ի պատասխան տեղեկացնում ենք, որ ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումն իրականացվում է ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդն սկսելուց երեք օր առաջ, իսկ եթե դա հնարավոր չէ գործատուից անկախ պատճառներով, ապա ամենամյա արձակուրդն սկսելու՝ աշխատողի դիմումում նշված ժամկետից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Եթե աշխատողի համար հաշվարկված աշխատավարձը սահմանված ժամկետում չի վճարվում աշխատողից անկախ պատճառներով, ապա ամենամյա արձակուրդը երկարաձգվում է այնքան օրով, որքան օրով երկարաձգվել է աշխատավարձի վճարումը, եւ երկարաձգված ժամանակի համար վճարումը կատարվում է այնպես, ինչպես ամենամյա արձակուրդի համար:

*ՀՀ աշխատանքի*
*եւ սոցիալական հարցերի նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Նշենք, որ ամենամյա արձակուրդից հետ կանչել թույլատրվում է միայն աշխատողի համաձայնությամբ:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարն արվել է Բաղրամյան փողոցում*

Երեկ Բաղրամյան փողոցում խոշոր հրդեհ է տեղի ունեցել: Դեպքի վայր էր մեկնել նույնիսկ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| Շիրակ | + 2 + 6<br>+ 12+ 15 |
| Կոտայքի լեռներ | + 2 + 4<br>+ 11+ 14 |
| Կոտայքի նախալեռներ | + 2 + 4<br>+ 16 + 18 |
| Գեղարքունիք | + 2 + 4<br>+ 11+ 14 |
| Լոռի | - 3 + 2<br>+ 15 + 18 |
| Տավուշ | + 1 + 5<br>+ 18 + 22 |
| Արագածոտնի լեռներ | + 1 + 4<br>+ 14 + 18 |
| Արագածոտնի նախալեռներ | + 2 + 4<br>+ 15 + 18 |

| | |
|---|---|
| Արարատ | + 3 + 5<br>+ 17+ 20 |
| Արմավիր | + 3 + 5<br>+ 20+ 22 |
| Վայոց ձորի լեռներ | + 2 + 4<br>+ 12+ 15 |
| Վայոց ձորի նախալեռներ | + 3 + 5<br>+ 19 + 20 |
| Սյունիքի հովիտներ | + 3 + 7<br>+ 20+ 23 |
| Սյունիքի նախալեռներ | + 1 + 3<br>+ 16 + 19 |
| ԼՂՀ | + 3 + 5<br>+ 13 + 17 |
| Երեւան | + 4 + 6<br>+ 12 + 17 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **19.5.2025**
Տպաքանակ՝ 3968
*Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21*

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ
չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային
հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը
պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*